ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2008 թվականի նոյեմբերի 27-ին

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հոդված 32. Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հարցերով իրավասու պետական մարմինները

1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացիներ) ապաստանի տրամադրման, փախստականի ճանաչման, ապաստան հայցողների և Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչվածների իրավունքների իրացման և սույն օրենքով սահմանված այլ իրավահարաբերությունների հարցերով իրավասու պետական մարմիններն են՝

1) Կառավարությունը.

2) լիազոր մարմինը.

3) Ազգային անվտանգության ծառայությունը.

4) Ոստիկանությունը.

5) արտաքին գործերի բնագավառում լիազորված մարմինը (այսուհետ՝ Արտաքին գործերով լիազոր մարմին).

6) աշխատանքի և սոցիալական հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Աշխատանքի և սոցիալական հարցերով լիազոր մարմին).

7) կրթության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Կրթության հարցերով լիազոր մարմին).

8) առողջապահության հարցերով լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ Առողջապահության հարցերով լիազոր մարմին).

9) խնամակալության և հոգաբարձության մարմինները (այսուհետ՝ Խնամակալության մարմիններ).

10) Հայաստանի Հանրապետության մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ~~աշխատակազմի~~՝ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները (այսուհետ՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններ).

11) այլ իրավասու պետական մարմիններ (այսուհետ՝ այլ մարմիններ):

2. Ապաստանի շնորհումը սույն հոդվածի 1 -ին մասում թվարկված պետական մարմինների կողմից պետք է դիտարկվի Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների ներքո, և սույն օրենքի կամ ապաստանի և փախստականների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության այլ օրենսդրական ակտերի կիրառման ընթացքում որևէ պարագայում չպետք է ապաստան հայցողի կամ փախստականի մասին տեղեկություններ փոխանակվեն նրա քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկրի իշխանությունների հետ:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: